

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 29 » մայիսի 2009թ.

N 84/Ա

ք. Ստեփանակերտ

ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՆՈՂԱԿԱՆ
ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նախադպրոցական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի բ) ենթակետը և հաշվի առնելով պետական նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընդգրկված երեխաների սննդի ծախսերի սահմանված չափերը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ


1. Հաստատել պետական նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծնողական վճարումների կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հուլիսի 1-ից: Գործող պետական նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար սույն հրամանի գործողությունը տարածվում է 2010 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

3. Սույն հրամանը ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, մշակույթի և սպորտի նախարարության 2003 թվականի մարտի 10-ին հաստատված պետական նախադպրոցական հիմնարկի ծնողական վճարումների կարգը:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կրթության և գիտության վարչության պետ Ռ. Մուսայելյանին:

ՆԱԽԱՐԱՐ



Վ. ԽԱՂԱՏՐՅԱՆ

Համաձայնեցված է՝
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
Ֆինանսների նախարար Ս. Թևոսյան

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
Կրթության և գիտության նախարարի

« 29 » Տեպրեմբեր 2009թ

« 29 » Տեպրեմբեր 2009 թվականի
N 84/Ա իրամանի



Կ Ա Ր Գ

**ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԾՆՈՂԱԿԱՆ ԿՃԱՐՈՒՄՆԵՐԻ**

Պետական նախադպրոցական ուսումնական հաստատությունների երեխաների սննդի ծախսերի համար նախատեսել ծնողական վճարումներ՝ ամսական 6000 /վեց հազար/ դրամի չափով:

- 1) Ազատել ծնողական վճարումներից՝
 - ա. առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին:
 - բ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների երեխաներին.
 - գ. 1-ին կարգի հաշմանդամների երեխաներին.
 - 2) Ազատել ծնողական վճարումներից 50% -ի չափով՝
 - ա. 2-րդ կարգի հաշմանդամների երեխաներին.
 - բ. 3 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների երեխաներին.
 - գ. միակողմանի ծնողազուրկ երեխաներին և միայնակ մայրերի երեխաներին:
- Վճարումները կատարել ամիսը մեկ անգամ, նախորդ ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 10-ը: